դանի էակ, որ նրա մեջ բնակվել էր, այսպիսով հեռացվում, վոնդվում էր նրանից[79]։

Թեև զանգեզուրցու համոզմունքով մահն աստծու ձեռքին էր և ամեն մի մարդու ճակատին գրված էր թե՛ նրա վիճակը և թե՛ մահվան օրը, ու ոչնչով հնարավոր չէր այդ գիրը փոխել, սակայն այդ համոզմունքի հետ, որի մեջ հայտնի չափով անդրադարձած էր քրիստոնեական գաղափարախոսությունը, շարունակում էր ապրել մի այլ հայացք, որ մահը կարող էր փոխադրվել մեկից մյուսին որպես մի վարակ։ Այդ հայացքին հետևելով, նորածին մանկանը դուրս էին տանում այն սենյակից, որտեղ հոգեվարքի մեջ տանջվում էր մեկը, կամ ուր մորթված միս էին ներս բերում։ Մանուկին ձեռքի վրա էին վերցնում պոկելով գետնից, երբ տան մոտով ննջեցյալ էին անցկացնում։ Հղի կինն էլ ձեռք չպիտի տար մահ պատճառող որևէ գործիքի—հրացանի, դաշույնի և այլն։

Նյութեղեն էր ըմբռնվում և հոգին։ Հոգու մասին զանգեզուրցու ունեցած հավատալիքների մեջ նույնպես ակնբախ կերպով պահպանվում էին նախնական մարդու մտածողության շատ բնորոշ հետքեր, երբ դեռ ննջեցյալը շարունակում էր մնալ հասարակության ռեալ անդամ, չէր առանձնանում մի այլ, անջատ աշխարհ և այնտեղ չէր ապրում մի այլ կենցաղով և դեռ չէր դարձած պաշտամունքի առարկա։ Զանգեզուրցին հոգեվարքին, հոգու հեռանալուն ասում է՝ ջան տալ և այդ ջանը չի նույնացնում շնչի հետ, ինչպես կարծում է Մ. Աբեղյանը[80]։ Գիտնականը թեև նրան շաղկապում է շնչի հետ, բայց տարբերում է շնչից նրանով, որ որոշ ձև է տալիս ջանին։ Մեռնողը երբեմն տեսնում է հեռացող հոգին որպես վորձակ կամ ծիտ, որը մարդու մարմնի միջից դուրս է թռչում, սակայն սովորաբար հոգին հեռանում է և շրջում է մարդկային կերպարանքով։ Այդ կերպարանքով նրան ճանաչում են հին ննջեցյալները այլ կյանքում, ինքն էլ, ինչպես արդեն ասված է, ճանաչում էր նրանց մեջ իր ազգականներին և ծանոթներին։ Կենդանի մարդը չէր կարող նրան շոշափել կամ բռնել, սակայն հրեշտակը՝ ճոգէճանը կարող էր նրան ճանել կամ ճոգէառը՝ առնել։ Մեռնողն էլ կարող էր հոգին նրան տալ։ Հոգին ունի ծանրություն։ Նա կարող է իր զարկով մեկին կուփել՝ թխել, իր ծանրությամբ կոխել։ Հոգու ծանրությունը պակասում է կամ ավելանում մարդու գործած բարի կամ չար արարքների համեմատությամբ և այն ժամանակ մազէ կամուրջը, որով նա պիտի անցնի մյուս աշխարհը, նրա ծանրության տակ դիմանում է կամ կտրվում։ Ջանի հեռանալու ժամանակ տան դուռը պետք էր բաց անել[81]։ Նրա վերադարձը դժվարացնելու համար պետք էր դուռը նրան ցույց չտալ, նրա աչքերը փակել, որ չհիշի, թե ովքեր են նրան տանից դուրս տարել, դիակը դուրս հանել, նախ դուռը կապելով և միայն երեք անգամ ճաժավ զարկելուց հետո բանալ, և որովհետև նա վերադառնում էր ծանոթ ճանապարհով՝ հուղարկավորության միջոցին մինչև

---

79 Տե՛ս, Բակունց Ա., «Խրղրլացավ» պատմվածքը։

80 Հոգու և ննջեցյալների խնդիրներին Մ. Աբեղյանը նվիրել է իր դիսերտացիայի՝ Der armenische Volksglaube II-րդ գլուխը։ Դիսերտացիան ամփոփում է թե՛ այս, թե՛ ժողովրդի հավատի այլ հարցերի շուրջը մինչև XIX դ. վերջը գրականության մեջ հրատարակված և նույնպես անձնապես գրանցած նյութերը և տալիս է շոշափված հարցերի մեծ մասամբ լուրջ չհիմնավորված բացատրություն։

81 Նույն սովորությունը կար նաև գերմանացիների մեջ՝ E. Meyer, Deutsche Mythologie, Berlin, 1891, էջ 71։